



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ**  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՔՐԵՍԵՆԹԱ ՀԱՍՎԱՅՆՔԻ ԿԱՇՄՈՒԹԵԱՆ Բ. ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ  
ՄԱՏՈՒՑՈՒԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ, ԹԱՐՈՉԻ ՊԱՅՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԱՋԱՆ  
ՀԱՅՈՅ ՅՈՐԴԱՐԵՑ.

**ԹՈՐ ՄԵՐ ԾՐԹԵՐԸ ԱՄՏՈՒԹ ՓԱՌԱԲԱՆԵԼՈՒ ԵՒ  
ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԽՕՍԵԼՈՒ ԾԱՌԱՅԵՆ  
ԵՒ ՄԵՐ ԱԿԱՆՉՆԵՐԸ՝ ԾԻՏԱԿՆ ՈՒ ՈՒՂԻՂԸ ԼՍԵԼՈՒ**

Համայնքները Աստուծոյ շնորհքով եւ Ս. Հոգիին զօրութեամբ կը կազմաւորուին, Զրիստոսի անունով նոյն հաւատքը ունեցողներու համախմբումը վերածելով Եկեղեցի: Ոհա այս շնորհքին արժանացան Քրեսենթա Հովիտի հաւատացեալները, շուրջ երկու տարիներ առաջ, երբ շրջանի հայորդիները, հովանաւորուած Առաջնորդ Սրբազնին՝ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ եւ վայելելով նեցուկը Ազգային Առաջնորդարանի Խառն Ժողովին, քով քովի եկան եւ երազը իրականութեան վերածելով համայնք ստեղծեցին, տարածուելով Լա Քանիատայէն, անցնելով Լա Քրեսենթա, Թահընկա, հասնելով մինչեւ Սանլէնտ:

Կիրակի, 9 Սեպտեմբեր 2007-ի կեսօրին, Քրեսենթա համայնքի կազմութեան Երկրորդ տարեդարձին առիթով, սուրբ եւ անմահ պատարագ մատոյց Թեմիս Առաջնորդ Սրբազն Հայոք, իր կողքին Ս. Սեղանին սպասարկող ունենալով Հոգ։ Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան եւ շրջանին հոգեւոր մատակարար Արք. Արտակ Զինյ. Տեմիրճեան: «Հրաշափառ» շարականի Երգեցողութեամբ թափօրը մուտք գործեց Եկեղեցի, ուր հաւատացեալներու բազմութիւն մը ներկայ էր:

Առաջնորդ Սրբազնը իր քարոզին նիւթ վերցուցած էր, օրուան ճաշու Աւետարանէն առնուած այս հատուածը (Մարկոս 7.31-37), ուր կը պատմուի, թէ ինչպէս Յիսուս Ղեկապոլիսի մէջ, իր հրաշագործ մատներով դպաւ խուլ ու համր մարդու ականջներուն եւ լեզուին, անոր կատարեալ թժկութիւն շնորհեց, ու մարդը սկսաւ լսել ու խօսիլ:

Սրբազնը շեշտեց, թէ Աստուծոյ Որդին ինք է որ այսօր եւս կը բանայ մարդու կարկամած լեզուն, կը քակէ խլութեան կապանքները, եւ իր թժկութեան արժանացած մարդուն կու տայ ճշմարտութիւնները լսելու եւ խօսելու կարողութիւնն ու քաջութիւնը:

Ապա Սրբազնը մէջբերեց Ս. Ներսէս Շնորհալիի գրած «Հաւատով Խոստովանիմ»ի 9րդ տունը, ուր մեծ հայրապետը կ'աղօթէ Աստուծոյ

խնդրելով. «Ամենախնամ Տէր, քու սուրբ Երկիւղի պահապան դիր ականջներուս՝ որ ախորժ չզգամ չար խօսքեր լսելէ, եւ բերանիս՝ որ ստութիւն չխօսիմ, եւ սրտիս՝ որ չարութիւն չխորհիմ»: Աւարտին՝ Սրբազնը կոչ ուղղեց բոլորին ըսելով. »Թող մեր շրթները Աստուած փառաքանելու եւ ճշմարտութիւնները խօսելու ծառայեն եւ մեր ականջները՝ շիտակն ու ուղիղը լսելու«:

Ս. Պատարագի աւարտին, կատարուեցաւ Եկեղեցւոյ կից գտնուող սրահի բացման արարողութիւնը: «Ուրախ Լեր» շարականին Երգեցողութեամբ՝ Սրբազնը, շրջապատուած Եկեղեցական հայրերով, սարկաւագաց եւ դպրաց դասերով, Եկեղեցւոյ Երեսփոխանական, Յոգաբարձական եւ Տիկնանց Օժանդակ մարմինի անդամներով, առաջնորդուեցաւ սրահ, ուր կատարեց պաշտօնական բացումն ու տնօրինեքի արարողութիւնը:

Առաջնորդ Սրբազնը այս առթիւ նախ փառք եւ գոհութիւն վերառաքեց Աստուծոյ, ապա բարձր գևահատեց Ջրեսենթա Յովիտի ծխական համայնքը, հոգաբարձական կազմը, Երեսփոխանները, Տիկնանց Օժանդակ Մարմինը, դպիրներն ու Երգչախումբի անդամները, բոլորին մաղթելով յարատեւ կորով եւ բարի ծառայութիւն, միաժամանակ շնորհաւորելով համայնքի հաստատման Երկրորդ տարեդարձը, յոյս յայտնելով՝ որ մօտիկ ապագային Ջրեսենթայի համայնքն ալ ունենայ իր սեփական Եկեղեցին:

Եկեղեցւոյ ծխական խորհուրդին կողմէ ներկայ բոլոր հաւատացեալներուն հրամցուեցաւ սիրոյ ճաշ: Ճաշի ընթացքին խօսք առին շրջանիս հոգեւոր մատակարար Արք. Արտակ Քինյ. Տեմիրճեանը եւ Յոգաբարձական կազմի ատենապետ՝ Տիար Տիգրան Տէր Սարգիսեանը, որոնք իրենց Երախտիքը յայտնեցին Առաջնորդ Սրբազն Յօր, բարերարներուն, եւ համայնքը օրէ օր կենդանի եւ ծաղկուն պահող բոլոր նուիրեալ սպասարկողներուն: Տիար Ատենապետ Նշեց, թէ այս սրահը պիտի ծառայէ Ջրիստոնեական Դաստիարակութեան աշխատանքներուն: Առաջնորդ Յօր տնօրինումով, յետ այսու ամեն Չորեքշաբթի Երեկոներուն տեղի պիտի ունենայ Ս. Գրքի սերտողութիւն, առաջնորդութեամբ Գերպ. Տ. Միւռու Ծ. Վրդ. Ազնիկեանի, Երկուշաբթի Երեկոները՝ Երիտասարդաց հաւաք, առաջնորդութեամբ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի, իսկ Կիրակի կեսօրներուն՝ Կիրակնօրեայ դպրոց:

Սրբազն Յօր պահպանիչով եւ «Կիլիկիա» մաղթերգի ու «Մեր Յայրենիք» հիմներգի հաւաքական կատարումով վերջ գտաւ սիրոյ ճաշը, որմէ ետք բոլոր ներկաները գոհունակ սրտով վերադարձան իրենց տուները:

DURING DIVINE LITURGY ON THE SECOND ANNIVERSARY OF THE  
CRESCENTA VALLEY PARISH

**"LET OUR LIPS SERVE TO GLORIFY GOD  
AND OUR EARS TO HEAR THE TRUTH"**

On Sunday, September 9, the Crescента Valley parish celebrated its two year anniversary with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who was assisted at the altar by Very Rev. Fr. Barhev Gulumian and Rev. Ardag Demirjian.

The daily gospel reading was from Mark 7:31-37 which tells of how Jesus visited Decapolis where He performed a miracle by placing His hand on the ears and tongue of one who was deaf and had a speech impediment and opened his ears and cured his speech impediment, stressing that even today it is Jesus who makes the deaf hear and the mute speak blessing the worthy ones with the ability to hear the truth and to speak with courage. The Prelate then citing the following passage from "I Confess with Faith" by St. Nerses the Graceful, "All-caring Lord, place Thy holy fear as a guard before my ears, that they may not delight in hearing evil words, before my mouth, that it may speak no falsehood...", concluded by declaring, "let our lips serve to glorify God and our ears to hear the truth."

At the conclusion of Divine Liturgy, the Prelate headed in a procession to the hall adjacent to the church where he presided over the official opening of the hall. In his remarks the Prelate first thanked God for His blessings. He also commended the Board of Trustees, Delegates, Ladies Auxiliary, acolytes and choir members for their devotion and service to the parish, and congratulated them on the second anniversary of the establishment of the parish expressing his wishes for the community to have its own church in the near future.

During the ensuing reception, remarks were made by Rev. Ardag Demirjian and Board of Trustees Chairman Mr. Dikran Der Sarkissian, both of whom expressed their gratitude to the Prelate and to all those who tirelessly serve towards the development of the parish. Mr. Der Sarkissian also announced that by the ordinance of the Prelate, Bible study classes will be offered in the newly opened hall by Very Rev. Fr. Muron Aznikian on Wednesday evenings and by Very Rev. Fr. Barhev Gulumian on Monday evenings for the youth group. Sunday School classes will also be taught in the new building.

The reception came to a close with the Prelate's benediction.